

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

«Ես եմ ճանապարհ, ճշմարտություն եմ կեանք»

(Յովհ. ԺԴ. 6)

Հետևաբար բնաբանը թէեւ կարճ նախադասութիւն մըն է, բայց կը բովանդակէ մարդկային բարձրագոյն կեանքի անթերի ծրագիր մը: Որոշ տեղ մը երթալու համար, անշուշտ, ճանապարհ մը պիտի ընտրես, գտած ես ճանապարհը, պիտի առաջ ընթանաս՝ մինչեւ մտադրածդ տեղը հասնիս: Այդ տեղը ճշմարտութիւն կը կոչուի, ներքին ճշմարտութիւն, հոգիով ապրած ճշմարտութիւն, որը գտնելու համար պիտի քալել ատոր համար սահմանուած ճանապարհով. պիտի աշխատիլ, ձգտիլ, որոնել, բախել, որպէսզի ի վերջոյ բացուին այն դռները, որ դէպի իսկական, գաղափարական եւ հոգեւոր կեանք կ'առաջնորդեն: Երբեմն մարդիկ կը յաւակնին ըսելու թէ բոլոր կրօններուն ճամբաներն ալ Աստուծոյ կ'առաջնորդեն, սակայն այդ ճիշդ չէ, որովհետեւ Պօղոս առաքեալին խօսքով ըսած. մենք միայն Քրիստոսով «գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը» (Ա. Կորն. 1.30): Մէկ Փրկիչ կայ, հետեւաբար, փրկութեան մէկ ճամբայ կայ միայն:

Քրիստոս մեր կեանքին դիմաց բացուած բազմաթիւ ճամբաներուն շարքին այլ ճամբայ մը չէ: Ան չըսաւ. «Ես ճամբայ մըն եմ», այլ՝ «Ես եմ ճամբան»: Ինքն է միակ ճամբան սիրոյ եւ սրբութեան: Ինքն է միակ ճամբան փառքի եւ փրկութեան: Ինքն է միակ ճամբան հաւատքի եւ յաղթութեան: Ինքն է միակ ճամբան կեանքի:

Բոլոր կրօններուն հիմնադիրները քարոզեցին գերեզմանէն անդին գոյութիւն ունեցող կեանքին մասին, բոլոր հիմնադիրները ճամբաներ որոնեցին, ճշդեցին ու առաջարկեցին մոլորեալ մարդոց համար՝ որպէսզի կարենային յաղթանակ տանիլ մահուան բերած սարսափին վրայ, բայց միայն մէկ հոգի՝ Քրիստոս ինք, գերեզման տարուելէ ետք՝ վերադարձաւ գերեզմանէն, վերադարձաւ կենդանացած ու կենդանացնող Աստուած իբրեւ, եւ ատով իսկ ան դարձաւ միակ ճամբան յարութեան ու կեանքի, միակ ճամբան անմահութեան ու յաւիտենականութեան:

Աշխարհի պատմութիւնը կերտող մարդիկ խօսեցան տեսակ-տեսակ ճամբաներու մասին, բայց անոնցմէ ո՛չ մէկը համարձակեցաւ ինքզինք «ճամբայ» կոչել, Քրիստոս սակայն, առաջնորդը աշխարհի պատմութեան, չխօսեցաւ ճամբու մը կամ ճամբաներու մասին, այլ ինքզինք հռչակեց իբրեւ ճամբայ՝ ստիպելով աշխարհի բոլոր մարդոց, խօսելու իր մասին եւ զինք ներկայացնելու իբրեւ ճամբան բոլոր ճամբաներուն, ճամբան բոլորին՝ մեծին ու փոքրին, հարուստին ու աղքատին, յայտնի մէկուն եւ անծանօթին:

Ոմանք հարց կու տան ըսելով. «Եթէ Քրիստոս ինքն է ճամբան, հապա ինչո՞ւ այնքան խոչընդոտներու կը հանդիպինք»: Սա խօսքով մենք Քրիստոսէ պահանջած կ'ըլլանք բան մը որ ինք չխոստացաւ: Ան չխոստացաւ մեզի հեղասահ եւ անփորձանք կեանք մը, բայց խոստացաւ հոգեւոր յաղթանակներով ու նուաճումներով լեցուն կեանք մը: «Յաղթանակ» եւ «նուաճում» բառերը կը պարզեն այն՝ որ մենք հոգեւոր պայքարի մէջ ենք: Հոգեւոր պայքարի մէջ եղող մէկը խոչընդոտներու ներկայութեան պէտք չէ զարմանայ:

Քրիստոս եւս ծանր պահերէ անցաւ: Ան սակայն իր ուշադրութիւնը չկեդրոնացուց

Գողգոթայի նեղ ճամբուն վրայ, այլ կեղրոնացուց այդ ճամբուն աւարտին յարութեան բոցկլտացող լոյսին վրայ, որովհետեւ այդ լոյսին մէջ Ան տեսաւ յարութիւնն ու յաղթանակը ամբողջ մարդկութեան: Մենք ալ սիրելիներ, մեզ շրջապատող տառապանքներուն մէջ լոկ տառապանք պէտք չէ տեսնենք, այլ այդ տառապանքին ետին կանգնող յաւիտենական կեանքն ու աստուածային օրհնութիւնները:

«Ես եմ ճշմարտութիւնը» (Յովհ. 14.6): Այո՛, Քրիստոս ինքն է ճշմարտութիւնը: Առանց Քրիստոսի եւ Քրիստոսէ հեռու՝ ամէն բան սուտ ու դատարկ է, ամէն բան փուճ ու կեղծ է: Քրիստոսէ հեռու եղող մարդը՝ ճշմարտութենէն է որ հեռու կ'ըլլայ: Եթէ սիրենք ճշմարտութիւնը՝ զՔրիստոս է որ սիրած կ'ըլլանք: Եթէ հալածենք ճշմարտութիւնը՝ Քրիստոսի սիրտն է որ արիւնած կ'ըլլանք: Եթէ քարոզենք ճշմարտութիւնը՝ զՔրիստոս է որ փառաւորած կ'ըլլանք:

Ան որ կը հաւատայ Աստուծոյ գոյութեան կամ ան որ կը հաւատայ թէ Աստուած ճշմարիտ է՝ պատուած ու մեծարած չ'ըլլար զԱստուած: Ինչ օգուտ երբ կը հաւատանք թէ Աստուած ճշմարիտ է ու ճշմարտութիւն, բայց մեր կեանքն ու գործը անհունօրէն հեռու են ճշմարիտէն ու ճշմարտութենէն: զԱստուած փառաւորած կ'ըլլանք միայն այն ատեն՝ երբ փորձենք իր Որդիին ճշմարիտ սիրոյ կեանքը ապրիլ երկրի վրայ:

Այո՛, ճշմարիտ էր ու է Յիսուսի սէրը, ճշմարիտ է անոր տագնապը, ճշմարիտ է անոր զօրութիւնն ու զոհողութիւնը, ճշմարիտ է անոր խաչն ու խաչելութիւնը, ճշմարիտ էին Գեթսեմանի պարտէզին մէջ անոր թափած քրտինքներն ու արցունքները, ճշմարիտ է աշխարհ բերած իր փրկութիւնը մեզի համար, ճշմարիտ է անոր սէրը մեզի հանդէպ, անոր մա՛հը մեր սիրոյն ու մեր փոխարէն, անոր յարութիւնը մեր կեանքին մէջ:

Սիրելիներ, «Ես եմ ճշմարտութիւնը» յայտարարող աստուածորդին սուտ չի խօսիր: Ինքն իսկ կը վկայէ ըսելով. «Ես՝ Տէրս՝ արդարութիւն կը խօսիմ եւ ճշմարիտ բաներ կը յայտնեմ» (Ես. 45.19): Ան ինչ որ կը յայտնէ եւ ինչ որ կ'ըսէ՝ ճշմարիտ են: Ճշմարիտ են ապագային վերաբերեալ իր բոլոր ըսածները: Ճշմարիտ են յաւիտենական կեանքին ու դժոխքին կապակցութեամբ իր բոլոր հաստատումները: Ճշմարիտ են իր համբերատարութեան, իր սիրոյն եւ իր քաղցրութեան մասին իր խօսածները: Հաւատա՛յ իր խօսքերուն եւ կանչէ զինք: «Տէրը մօտ է այն ամէնուն, որ ճշմարտութեամբ զինք կը կանչեն» (Սաղմ. 145.18): Ուստի, ճշմարտութեամբ կանչէ Տիրոջ, այսինքն՝ ամբողջ սրտովդ եւ հոգիովդ փափաքէ Աստուծոյ Որդիին յանձնուիլ եւ իր փառքին համար աշխատիլ: «Ժնծի՛ եկէք» (Մատթ. 11.28): Այս հրաւերը քեզի՛ եւ ինծի՛ ուղղուած է: Եթէ կողմնակից ենք ճշմարտութեան՝ պիտի ընդառաջենք իր հրաւերին, քանի ինք ըսաւ. «Ով որ կողմնակից է ճշմարտութեան՝ անիկա իմ խօսքս կը լսէ» (Յովհ. 18.37): Չվախնանք կողմնակից ըլլալու ճշմարտութեան: Չվախնանք աշխարհին ըսելու թէ մենք կը սիրենք Յիսուսը:

«Ես եմ կեանքը» (Յովհ. 11.25, 14.6): Աստուած իր Որդիին միջոցաւ կեանք շնորհեց մեզիքով մեռած մարդկութեան, նո՛ր կեանք, յաւիտենական կեանք, յաղթող կեանք: Հոն ուր չկայ Քրիստոս՝ հոն չկայ կեանք ու կենսունակութիւն, հոն չկայ յաղթութիւն եւ անմահութիւն:

Առանց Որդիին ո՛չ ոք կեանք ունեցաւ կամ պիտի ունենայ: Յովհաննէս առաքեալ կ'ըսէ. «Աստուած յաւիտենական կեանք տուաւ մեզի, եւ այդ կեանքին աղբիւրը Որդին ինքն է: Հետեւաբար, ով որ Աստուծոյ Որդին իր մէջ ընդունած է՝ այդ կեանքը ունի. իսկ որ չունի Որդին՝ յաւիտենական կեանք ալ չունի» (Ա. Յովհ. 5.11):

Ան որ ունի Յիսուս-կեանքը իր սրտին մէջ՝ իր սիրտը կը դառնայ կեանքով բաբախուն, զօրութեամբ լեցուն, յոյսով եռուն, եռանդով զեղուն: Սիրտ մը որուն մէջ Յիսուս-կեանքը կը բնակի՝ կը վերածուի խնկաբոյր տաճարի, նոր Բեթղեհէմի, սիրոյ աբղիւրի, սրբութեան սեղանի: Սիրտ մը որ իր դռները կը բանայ Յիսուսի կենսագործող ներկայութեան դիմաց՝ կը դառնայ երկինքէն աւելի մաքուր, աստղի նման անհպելի, ձիւնէն աւելի ճերմակ, կրակէն աւելի ջերմ:

Մէկը որ սիրտը կը բանայ Յիսուսի սիրտէն հոսող սիրոյն դիմաց՝ այդ սիրով կ'աճի, կը մեծնայ, կը բերեղանայ, կը կայտառանայ, կը թարմանայ ու կը զուարթանայ: Յիսուսի սիրտէն հոսող սիրոյն դիմաց՝ մարդուն սիրտը կը վերածուի երգի ու երգարանի, քաղցրալից սկիհի, փառաբանութեան խորանի, լուսաճաճանչ արեգակի: Քրիստոս է կեանքը, որովհետեւ Քրիստոս յաղթեց մեղքին ու մահուան: Լսեցէ՛ք Աստուծոյ խօսքը. «Զիս գտնողը կեանք կը գտնէ»:

Սիրելի՛ հաւատացեալ, գտնձ ես Քրիստոս՝ կեանքդ: Առանց Քրիստոսի մահ է բաժինդ: Առանց Քրիստոսի խաւար է կեանքդ ու յաւիտենականութիւնդ: Մի՛ մոռնար, որ գերեզմանէն անդին Քրիստոսէ զատ ուրիշ պաշտպան չունիս: Գերեզմանէն անդին զՔրիստոս ունենալու համար իբրեւ պաշտպան ու պահապան, պէտք է այսօր իսկ յանձնուիս իրեն: Քանզի մի է ճանապարհը, մի է ճշմարտութիւնը եւ մի է կեանքը, որ է Յիսուս Քրիստոս:

Սիրելի՛ նորընծաներ, Դաւիթ Մարգարէ իր նեղութեան, հալածանքի, կեանքի ամենադժուարին պայմաններու մէջ Աստուծոյ դիմելով ըսաւ. «Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ո՛չ պակասեսցի» (Սաղմ. ԻԲ. 2): Սաղմոսերգուի այս խօսքն է, որ ձեր նոր կոչումի եւ պաշտօնի նուիրագործման սրբազան ընկերներուն կենդանացաւ ձեր հոգիներու մէջ: Այսօր դուք նեղութեան մէջ չէք եւ ոչ ալ հալածանքի մարգարէին պէս, արտաքին դժուարութիւններու կամ աղքատութեան եւ այլ ծանրութեան տակ ճնշուած ալ չէք. փառք Աստուծոյ, կը վայելէք ներկայ հաւատացեալ ժողովուրդին սէրն ու յարգանքը: Վստահ եմ, թէ սուրբ Միւռոնով օծուելէ յետոյ ձեր հոգիներու մէջ բարձրացած է հոգսի եւ պարտականութեան ծանր զգացումը, անհանգստութիւն մը պատած է ձեզի՝ արդեօք պիտի կարողանա՞ք օգտակար ըլլալ մեր եկեղեցիին, մեր ժողովուրդին, որ յոյսերով լի յառած էր իր աչքերը ձեր գալստեան: Պիտի կարողանա՞ք արժանաւոր յաջորդը ըլլալ մեր եկեղեցւոյ երանաշնորհ հայրապետներուն, վարդապետներուն, որոնք հոգիներու փրկութեան ղեկավար, քրիստոնէական սիրոյ իրականացումի, աստուածահաճոյ հաստատութիւններու հիմնադիրներ, հոգեւոր եւ ազգային կեանքի վերածնութեան, հոգեւոր տաճարներու կառուցման ճարտարապետներ հանդիսացան, հոգիներու առ Աստուած սլացման եւ անոր սեղանի վրայ անուշահոտ կնդրուկի նման բուրելու վարդապետներ եւ ուսուցիչներ եղան:

Սուրբ Գրիգորներու, Ներսէսներու, Սահակ Պարթեւներու, Մեսրոպներու, Նարեկացիներու, Շնորհալիներու, Տաթեւացիներու, Շղթայակիրներու եւ Պարոնտէրներու հոգիները երկինքէն պիտի դիտեն ձեր ամէն քայլը, խօսքն ու գործը, ծառայութիւնը Սուրբ Աթոռոյս, մեր եկեղեցիին եւ հօտին, պիտի կարողանա՞ք անոնց գծած շաւիղով ընթանալ: Ահա՛, սիրելիներ, ինչ հոգս պատած է ձեր սիրտերը: Ուստի եւ մարգարէին նման ձեր աչքերը դէպի երկինք բարձրացուցէք եւ ըսէք. «Տէր հովուեսցէ զիս եւ ինձ ինչ ո՛չ պակասեսցի»:

Մեր Սուրբ Աթոռը անցեալէն կու գայ: Տառապանքի հովիտէն անցած է եւ այսօր

ալ կ'անցնի, որովհետեւ «Կովերու պարտէզին» հարցը բաց վերքի մը պէս կը շարունակէ արիւնիլ, սակայն Աթոռը կանգ չառնէր: Կը քալէ Սրբոց Յակոբեանց միաբանութեան եւ մեր ժողովուրդի քայլերու շեշտով, զարկով ու կշռոյթով, Սուրբ Գլխադիր եւ Տեառնեղբայր առաքեալներու, Շղթայակիր եւ Պարոնտէր Պատրիարքներու հովանաւորութեամբ, բարեխօսութեամբ եւ օրհնութեամբ:

Երկար է ճամբան, փշոտ՝ ինչպէս միշտ: Այդ ճամբով անարգել քալելու, փուշերն արմատախիլ ընելու համար առաքելահիմն մեր Սուրբ Աթոռը պէտք ունի նախանձախնդիր, նուիրեալ, անդաւաճան հոգեւորականներու, որոնք ջերմեռանդ նուիրումով զօրաւիգ կը կանգնին իրեն եւ ամբողջական ընծայաբերութեամբ եւ գիտակցութեամբ կը նուիրուին անոր պայծառութեան: Ընտրած էք Քրիստոսի ճանապարհը, Անոր ճշմարտութիւնը եւ Անորմով կեանքը, հետեւաբար նոր եռանդով լծուեցէք Անոր տան, այս դարաւոր հաստատութեան շէնացման ու պայծառացման սուրբ գործին:

Կ'աղօթեմ, եւ կը խնդրեմ միաբանակից եղբայրներս ու հաւատացեալ մեր ժողովուրդն ալ աղօթակից ըլլան ինծի եւ ձեզի, որ Տէրը օգնական ըլլայ ձեզ, եւ Անոր խնամքի տակ ըլլայ ձեր ընթացքն ու գործը, որպէսզի անկեղծ սրտով, ջերմեռանդ նուիրումով այսուհետ որպէս օծեալ հոգեւորականներ խնդրէք Սուրբ Աթոռոյս հովանաւոր սուրբերու բարեխօսութիւնը եւ փառաւորէք Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին յաւիտեանս, յաւիտեանից. ամէն:

ՆԵՐՍԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆՈՅԵԱՆ

